

**4.1.2. Մարդասիրական օգնություն**

Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, 2000թ. հունվար-փետրվարին մարդասիրական օգնության կարգով, Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 11394.6 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 6506.7 մլն. դրամ կամ 12.3 մլն. ԱՄՆ դոլար: Ստացված օգնության 52.8%-ը կազմել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 25.5%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները, 6.5%-ը՝ սարքերը և ապարատները, 4.6%-ը՝ բուսական ծագման արտադրանքը, 2.6%-ը՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցները և այլ բեռներ:

**Մարդասիրական օգնության ծավալը 1999-2000թթ. հունվար-փետրվար ամիսներին ըստ ապրանքային խմբերի**

	1999 թ. հունվար-փետրվար			2000 թ. հունվար-փետրվար			Աճի տեմպը %-ով
	Քանակը տոննա	Արժեքը		Քանակը տոննա	Արժեքը		
		մլն. դրամ	հազ. ԱՄՆ \$		մլն. դրամ	հազ. ԱՄՆ \$	
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>	<b>6433.8</b>	<b>6720.7</b>	<b>12422.6</b>	<b>11394.6</b>	<b>6506.7</b>	<b>12305.7</b>	<b>99.1</b>
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	1.0	2.6	4.8	51.0	52.0	98.4	2033.8
Բուսական ծագման արտադրանք	4354.0	467.5	895.1	1828.3	300.7	570.1	63.7
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	1326.2	867.3	1606.5	300.4	175.0	332.8	20.7
Պատրաստի սննդի արտադրանք	11.0	12.9	24.1	45.0	8.5	16.2	67.1
Հանքահումքային արտադրանք	38.2	6.2	11.4	20.0	3.1	5.9	51.3
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	59.1	2983.1	5492.9	8615.6	3442.4	6497.1	118.3
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	4.0	21.0	38.6	1.4	12.1	22.9	59.4
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0.0	0.0	0.0	0.1	0.8	1.5	~
Փայտ և փայտյա իրեր	0.0	0.0	0.0	1.5	0.1	0.2	~
Թուղթ և թղթից իրեր	16.8	39.4	73.1	8.2	14.7	27.9	38.2
Մանածագործական իրեր	95.5	668.9	1232.2	109.8	114.0	216.2	17.5
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	3.1	10.8	19.9	5.5	12.9	24.4	122.7
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	136.8	55.7	103.0	0.1	2.7	5.2	5.1
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	37.5	61.5	113.7	2.8	6.8	13.0	11.4
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	176.3	829.2	1523.3	147.0	1658.2	3142.8	206.3
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	84.0	405.0	746.4	169.4	169.2	319.9	42.9
Սարքեր և ապարատներ	5.1	71.2	135.9	16.7	424.6	804.9	592.3
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	85.2	218.4	401.7	71.9	108.7	206.4	51.4

Մարդասիրական օգնություն ստացվել է աշխարհի 19 երկրներից, հիմնականում՝ ԱՄՆ-ից (ընդհանուր օգնության 70.9%-ը), Հունաստանից (11.0%-ը), Ճապոնիայից (6.4%-ը), Իտալիայից (4.6%-ը), Չինաստանից (3.0%-ը):